



Հաստատված է՝
ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 04.07.2012 թ. № 07-12-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆ
ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԳՐԱՎՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(AMICUS CURIAE)

№ 07-12-Ա

ք.Երևան

04.07.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը¹, մասնակցությամբ համակարգող Արա Զոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթի և 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

¹ Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանը սույն հարցի քննարկմանը չի մասնակցել:

Հարցի կարևորությունը

Սույն հարցն իրենից լուրջ կարևորություն է ներկայացնում անձի իրավունքների պաշտպանության, դատարանի մատչելիության, արդար դատաքննության իրականացման առումով: Այս առումով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի անդամ պետությունների վրա պոզիտիվ պարտավորություն է դրվում՝ ապահովելու այդ իրավունքների անշեղ իրականացումը: Հարցը կարևորվում է նաև այն առումով որ հաճախ անձիք հնարավորություն չեն ունենում արդյունավետ բողոք բերելու և իրականացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը՝ ժամկետների հաշվարկման կարգի թերությունների պատճառով: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր նախադեպային որոշումներում այս հարցերի կապակցությամբ իր հստակ դիրքորոշում ունի արտահայտված, այնուամենայնիվ խնդիրը մեզ մոտ շարունակում է արդիական մնալ:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը)

Ուսումնասիրության առաջին մասում ներկայացվում են վերոհիշյալ հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները, որտեղ դատարանը շոշափվելիք հարցերի կապակցությամբ ունի իր հստակ ձևավորված պրակտիկան: Երկրորդ մասը վերաբերում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) և Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) որդեգրած դիրքորոշումներին:

Սույն եզրակացության մեջ խնդրո առարկան կներկայացվի հետևյալ ասպեկտներով՝

- **Ժամկետի հոսելու.**
- **դատաքննության հրապարակայնության.**
- **արդար դատաքննության.**
- **արդյունավետ բողոք ներկայացնելու հնարավորության.**

Սույն ուսումնասիրությունը հիմնված է միջազգային և համեմատական իրավունքի նշանակալից հիմքի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) մեկնաբանման այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են արդար դատաքննությունը, դատաքննության հրապարակայնությունը, իրավական որոշակիությունը և այլն:

I. Ժամկետի հաշվարկումը դատական ակտի հրապարակման պահից՝ առանձին դեպքերում որպես դատարանի մատչելիության իրավունքի

Խախտում.

1. ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում անդրադարձել է արդարադատության մատչելիության իրավունքին: ՄԻԵԴ նշյալ հոդվածի մանրակրկիտ վերլուծության և մեկնաբանության արդյունքում գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ներառում է նաև դատարանի մատչելիության իրավունքը՝ չնայած այն հանգամանքին, որ այդ իրավունքը հստակորեն ամրագրված չէ Կոնվենցիայում:
2. ՄԻԵԴ-ը, վկայակոչելով Կոնվենցիայի նախաբանում ամրագրված իրավունքի գերակայության սկզբունքը, ընդգծել է, որ քաղաքացիական հարցերի կապակցությամբ դժվար է խոսել իրավունքի գերակայության մասին, եթե բացակայում է դատարան դիմելու հնարավորությունը: ՄԻԵԴ-ը 6-րդ հոդվածը մեկնաբանել է՝ ելնելով «քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի սկզբունքներից»: Ըստ ՄԻԵԴ-ի, դատարանի մատչելիության սկզբունքն իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքն է:
3. ՄԻԵԴ-ը նաև մատնանշել է այն բացասական հետևանքները, որոնք կարող են տեղ գտնել 6-րդ հոդվածի շրջանակից դատարանի մատչելիության իրավունքը բացառելու արդյունքում: Ըստ ՄԻԵԴ-ի, եթե 6-րդ հոդվածով չպաշտպանվեր նաև դատարանի մատչելիության իրավունքը, ապա պայմանավորվող պետությունները կարող էին, չխախտելով այդ հոդվածը, դատարանների իրավագործությունից բացառել որոշակի կատեգորիայի քաղաքացիական հայցեր և դրանց քննության իրավասությունը վերապահել գործադիր իշխանությունից կախվածության մեջ գտնվող մարմինների:
4. ՄԻԵԴ-ը իր նախադեպային իրավունքում ամրագրել է, որ. «Դատարանի իրավունքը», որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են քողոքի ընդունելիության պայմանները, քանի որ այն իր բնույթով թողնված է պետության կարգավորմանը, որն այս առնչությամբ ունի հայեցողության որոշակի սահման: Սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ

կամ այն չափով, որ խախտվի իրավունքի բուն էությունը²:

5. Վերջապես, նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն³:
6. ՄԻԵԴ-ի տեսանկյունից «Հրապարակման պահ» հասկացությունը հանդիսանում է այն պահը, երբ անձին հասանելի է դառնում հրապարակված տեքստի պարունակությունը: Սակայն հաճախ, տեքստի մեծածավալ և բարդ լինելու հանգամանքի պարագայում «հրապարակման պահ» հանդիսանում է այն պահը, երբ անձն իր ձեռքի տակ ունենում է այդ փաստաթուղթը և հնարավորություն է ունենում մանրամասն ծանոթանալու ներկայացված փաստարկներին, անելու համեմատություններ, իրականացնելու համապատասխան վերլուծություններ:
7. Այսինքն, անհրաժեշտ է, որ անձը իրական հնարավորություն ունենա այդ հրապարակված նյութը ընկալելու, մանավանդ, երբ խոսքը գնում է բարդ իրավաբանական վերլուծություններին, դատարանի եզրահանգումներին և վերջինիս կողմից կիրառված օրենքի դրույթներին: Այն պայմաններում, երբ հրապարակվում է միայն որոշման եզրափակիչ մասը, և անձի համար անհայտ է մնում դատարանի պատճառաբանությունները և նրա կողմից կիրառված օրենքի դրույթները, անձը զրկվում է որոշման բողոքարկման իրական հնարավորությունից: Այս պարագայում, երբ ժամկետը հաշվարկվում է հրապարակման պահից, այլ ոչ թե անձին այն հասանելի լինելու պահից, ապօրինի կերպով անձը զրկվում է ողջամիտ ժամկետում իր բողոքը կազմելու և ներկայացնելու իրավունքից, ինչը և սահմանափակում է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը: Այսպայմաններում կիրառված սահմանափակումները հանգեցնում են անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապօրինի սահմանափակման:

² *Golder v. United Kingdom*, 21 feb. 1975, *Fayed v. United Kingdom*, 25 aug. 1994, *Ashingdane v. United Kingdom*, 28 may 1985, *Garcia Manibardo v. Spain* (15 feb. 2000), 29.06.2000, *Bellet v. France*, 20 nov. 1995, *Philis v. Greece*, 27 aug. 1991, *Tolstoy Miloslavsky v. United Kingdom*, 23 jun. 1995, *Hornsby v. Greece*, Judgment 19 March 1997, para. 40

³ *Levages Prestations Services v. France*, 23 oct. 1996, § 40, 1996-V, *Brualla Gómez de la Torre v. Spain*, 19 dec. 1997, § 33, 1997-VIII

8. Սույն գործում այս սահմանափակումը հակասում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին և չի հետապնդում իրավաչափ նպատակ, քանի որ դատարանը նաև մերժել է բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը, ինչով հանգեցրել է դատարանի մատչելիության իրավունքի խախտման և հնարավորություն չի տվել անձին՝ փորձելու վերականգնել իր խախտված իրավունքները:
9. Վերոհիշյալ հանգամանքը հակասում է ՄԻԵԴ-ի որդեգրած սկզբունքին, ըստ որի «Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա»⁴, որպիսի հնարավորությունից զրկված է եղել սույն գործով դիմողը: Այս հանգամանքը գործնականում հանգեցրել է դատարանի մատչելիության իրավունքի անարդյունավետության:
10. *Pérez de Rada Cavanilles v. Spain* գործով ՄԻԵԴ-ը ամրագրել է, որ «Դիմումների, բողոքների կամ այլ գանգատների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և համապատասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս»⁵:
11. Այդ է պատճառը, որ ժամկետների սահմանափակումների առումով ՄԻԵԴ-ը որդեգրել է հետևյալ դիրքորոշումը, այն է. ՄԻԵԴ դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետ սկսում է հաշվարկվել անձի կողմից «վերջնական դատական ակտի» ստանալու օրվանից: Այսինքն, ՄԻԵԴ-ը անձին տրամադրում է մաքսիմալ հնարավորություն իր իրավունքները վերականգնելու գործում:
12. Այսպիսով, ՄԻԵԴ-ը սույն հարցի հանդեպ իր հստակ դիրքորոշումն ունի

⁴ *Bellet v. France*, 4 dec.1995, Application no. 23805/94, § 36,

⁵ *Pérez de Rada Cavanilles v. Spain*, 28 oct. 1998, §45, Reports of Judgments and Decisions 1998-VIII

հաստատված, որը հանգում է անձին իր իրավունքները վերականգնելու համար պաշտպանության միջոցներից անարգել օգտվելու հնարավորություն ընձեռելուն:

II. Դատական ակտի հրապարակման հասկացությունը (հրապարակային լսումների իրավունք).

13. Կոնվենցիայի 6-րդ հոդվածը յուրաքանչյուրին երաշխավորում է իրենց քաղաքացիական իրավունքները կամ պարտականությունները որոշելիս հրապարակային դատաքննության իրավունք: Միաժամանակ այդ հոդվածը սահմանում է հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակման պայմաններ, այն է՝ մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով, խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

14. Դատական ակտի հրապարակումը հանդիսանում է հրապարակային դատաքննության բաղկացուցիչներից մեկը, երբ հանրությանը օբյեկտիվ հնարավորություն է տրվում հետևելու դատական գործերի ընթացքին և որոշակի առումով զսպող և վերահսկողություն իրականացնող մարմնի դեր իրականացնելու:

15. *Pretto and Others v Italy* գործով ՄԻԵԴ-ն ամրագրել է. «Եվրոպական Խորհրդի շատ անդամ պետություններ ունեն որոշումները հրապարակային դարձնելու համար բարձրաձայն ընթերցելու փոխարեն այլ միջոցների դիմելու երկարամյա ավանդույթ... օրինակ, տեղադրել այն հանրության համար հասանելի տեղեկատուի մեջ»⁶:

16. Այս առումով, դատական ակտերի հրապարակման միևնույն օրը ամբողջական տեքստի տեղադրումը տեղեկատուի մեջ կարող է ծառայել այլընտրանքային միջոց դատաքննության հրապարակայնության

⁶ *Pretto and Others v Italy*, 8 dec. 1983, Application no. 7984/77, § 26

սկզբունքի ապահովման առումով: Այդ դեպքում որևէ խնդիր չի առաջացնի «հրապարակման պահ»-ից որոշման դեմ բողոքարկելու համար սահմանված տասնօրյա ժամկետի հաշվարկումը:

17. Մինչդեռ այն պարագայում, երբ թեև ամբողջական տեքստը հրապարակվի դատական նիստի ընթացքում, սակայն տեքստը չտրամադրվի կողմին, դա կրկին խնդրահարույց կլինի, քանի որ անձն օբյեկտիվորեն հնարավորություն չունի բազմաքանակ էջանոց իրավական վերլուծություններն ամբողջությամբ ընկալելու և դրանց դեմ փաստարկներ ներկայացնելու: Այս պարագայում որոշման եզրափակիչ մասը հրապարակելը և միննույն օրը դրա ամբողջական տեքստը տեղեկատուի մեջ տեղադրելը կլինի խնդրի ճշգրիտ լուծումը:

18. Դատական ակտի հրապարակայնության վերաբերյալ համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Միջազգային Կոմիտեն, որի Մեկնաբանությունները հանգում են հետևյալին, որ. «դատարանի առջև իրավահավասարության և արդար դատաքննության սկզբունքները պահանջում են, որ քրեական գործով յուրաքանչյուր դատավճիռ, այդ թվում՝ կարևորագույն փաստերը, ապացույցները և իրավական պատճառաբանությունները, պետք է կատարվեն հրապարակայնորեն», որոշակի սահմանափակվում տարածվում է միայն անչափահասներին վերաբերող գործերի վրա: Հասարակական վերահսկողությունը ևս պետք է ունենա ամբողջական հասանելիություն վճռի բովանդակությանը: Հետևաբար, դատական որոշումների հանրային իմացությունը չի կարող սահմանափակվել որոշակի թվով անձանցով, ինչպիսիք են, օրինակ, գործի կողմերը⁷:

19. Դատաքննության հրապարակայնությունը կողմերի համար բացառապես արդար դատաքննության ապահովման միջոց չէ, այլ նաև արդարադատության նկատմամբ վստահություն կառուցելու և պահպանելու կարևոր գործիք: Ինչպես ցանկացած այլ հասարակական հաստատություն, արդարադատության համակարգը ևս ծառայում է հասարակությանը, անձնավորված է հասարակության յուրաքանչյուր անդամով, ով մուտք է գործում դատարան⁸:

⁷(Trial Monitoring Project in Armenia (April 2008 – June 2009) OSCE/ODIHR Final Report, page 29)

⁸(Trial Monitoring Project in Armenia (April 2008 – June 2009) OSCE/ODIHR Final Report, page 34)

20. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագրի 14-րդ հոդվածի վերաբերյալ կատարած Ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտեն նշել է. «Հոդված 14-րդի 1-ին մասը ճանաչում է, որ դատարաններն ունեն որոշակի բարոյական, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության ապահովման նպատակով դատական գործի կամ դրա մի մասի հրապարակայնությունը բացառելու իրավասություն, կամ երբ դա պահանջում է կողմերի մասնավոր կյանքը, կամ երբ դատարանի կարծիքով դա անհրաժեշտ է հատուկ հանգամանքների բերումով, կամ այն դեպքում, երբ հրապարակայնությունը կարող է վնասել արդարադատության շահերին: Բացի սույնի բացառություններից, դատաքննությունը պետք է բաց լինի հասարակության՝ ներառյալ զանգվածային լրատվության միջոցների համար, և չի կարող սահմանափակված լինել որոշակի խմբի անձանց համար: Նույնիսկ այն գործերում, որոնք հրապարակային չեն եղել, դատավճիռը՝ այդ թվում գործի էական հանգամանքները, ապացույցները և պատճառաբանությունները պետք է հրապարակային լինեն, բացառությամբ այն դեպքերի, երբ շոշափվում են անչափահասների շահերը կամ դատավարությունը վերաբերում է ամուսնական վեճերին և երեխաների որդեգրմանը կամ ինսամակալությանը»⁹:

21. Այսպիսով, դատական ակտի բովանդակության հրապարակումը ևս պարտադիր պայման է հանդիսանում, որին լուրջ կարևորություն է տրվում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ատյաններում: Հետևաբար, այս պահանջի չկատարումը խախտում է արդար դատաքննության իրավունքը և ինքնըստինքյան զրկում անձին արդյունավետ բողոք ներկայացնելու հնարավորությունից:

III. Արդյունավետ բողոք բերելու իրավունքի պաշտպանությունը.

22. Դատական ակտի ամբողջական տեքստի տրամադրումը ապահովում է նաև անձի կողմից արդյունավետ բողոք բերելու իրավունքի և հնարավորության իրականացումը: Միայն հիմնավորված բողոք բերելու պարագայում անձը հնարավորություն կունենա պաշտպանելու իր

⁹CCPR/C/GC/32, page 9

իրավունքներն ու շահերը մաքսիմալ կերպով: Մինչդեռ բողոքի բացառապես եզրափակիչ մասի հրապարակման պարագայում անձի՝ այդ իրավունքերի իրականացումն ի չիք է դառնում, քանի որ նա հակափաստարկների և հիմնավորումների հնարավորությունից զրկված է լինում:

23. Իրավունքների պաշտպանության տեսակներից մեկը հանդիսանում է դատական ակտի վերանայման իրավունքը: Չունենալով ձեռքի տակ ամբողջական փաստաթուղթ, անձը ակամայից զրկվում է այդ իրավունքից: Այս առումով ինչպես ՄԻԵԴ-ը, այնպես էլ ՄԱԿ-ը, ի դեմս Մարդու իրավունքների կոմիտեի, պաշտպանում է քաղաքացու շահերը՝ դատական ակտի վերանայման իրավունքի իրականացման գործում:
24. Այսպիսով, վերջինս նշում է. «Յուրաքանչյուր անձի՝ իրեն վերաբերող դատավճռի վերանայման հնարավորությունը կարող է իրականացվել արդյունավետ, եթե անձը հնարավորություն ունի ծանոթանալու դատարանի պատշաճ հիմնավորված, գրավոր վճռին, իսկ առաջին ատյանի դատարանի դեպքում, երբ ներպետական օրենսդրությունը սահմանում է մի քանի ատյաններով բողոքարկման կարգ, նաև այլ փաստաթղթերի, ինչպիսիք են դատական գործում առկա փաստաթղթերի կրկնօրինակները, անհրաժեշտ են բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար: Այս իրավունքի արդյունավետությունը, այնպես, ինչպես հողված 14-ի 5-րդ մասը, ևս խախտվում է, երբ դատական ակտի վերանայումը իրավասու դատարանի կողմից անհիմն կերպով հետաձգվում է»¹⁰:

IV. Վեցամսյա ժամկետի հաշվարկման կարգը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում.

25. ՄԻԵԴ-ը իր *Paul and Andrey Edwards v. the United Kingdom* գործով նշել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատ ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը հաշվարկվում է ներպետական միջոցները սպառող վերջնական դատական ակտի կայացումից¹¹: Մեկ այլ գործով Դատարանը նշել է, որ վեցամսյա ժամկետը սկսվում է հոսել այն օրվանից, երբ դիմումատուն կամ նրա ներկայացուցիչը բավականաչափ տեղեկություն են ունենում վերջնական

¹⁰CCPR/C/GC/32; Page 15

¹¹*Paul and Andrey Edwards v. the United Kingdom, (the text is only available in French)*

դատական ակտի վերաբերյալ¹²:

Այս հանգամանքները ամփոփելով՝ ՄԻԵԴ-ը վեցամսյա ժամկետի հաշվարկն իրականացնում է երկու տեսանկյունից.

ա) Որոշման տրամադրումը դիմումատուին. Այն դեպքը, երբ դիմումատուին անմիջապես տրամադրվում է ներպետական վերջնական դատական ակտի պատճենը, լավագույն լուծումն է հանդիսանում Հոդված 35-ի առարկայի և նպատակների համապատասխան վեցամսյա ժամկետի հաշվարկման համար, որի պարագայում ժամկետի հաշվարկը սկսվում է որոշման գրավոր տեքստի պատճենը տրամադրելու օրվանից¹³:

բ) Որոշման տրամադրումը ներկայացուցիչն. այն դեպքում, երբ դիմումատուի ներկայացուցիչը պատշաճ ձևով տեղեկացվում է ներպետական արդյունավետ միջոցները սպառող դատական ակտին, ապա հաշվարկը սկսվում է հոսել այդ իսկ օրվանից՝ անկախ այն հանգամանքից, որ դիմումատուն ավելի ուշ է տեղյակ պահվում որոշման մասին¹⁴:

26. *Papachelas v. Greece* գործով իր նախադեպային որոշման մեջ ՄԻԵԴ-ն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «այնտեղ, որտեղ ներպետական օրենքը չի նախատեսում որոշման ուղարկումը, նախընտրելի է վեցամսյա ժամկետի հաշվարկը կատարել այն օրվանից, երբ դատական ակտը վերջնականացվել է և որ կողմերը իրական հնարավորություն են ունեցել ծանոթանալու դրա բովանդակությանը»¹⁵:

27. Այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ն իր որոշումներում մի հանգամանք ևս կարևորում է, այն է. «Դիմումատուն կամ նրա ներկայացուցիչը պետք է պատշաճ ջանասիրություն դրսևորեն դատարանի քարտուղարություն մուտքագրված որոշման պատճենը վերցնելու համար»¹⁶: Սակայն այս դեպքը վերաբերում է այն դիմումատուներին, որոնց երկրի օրենսդրությամբ սահմանված է դատական ակտի հրապարակման այլ կարգ, քան բանավոր ընթերցումը, այն է, որոշման տեղադրումը համապատասխան տեղեկատուի մեջ:

¹² *Koc and Tosun v. Turkey*, (the text is only available in French)

¹³ *Worm v. Austria judgment of 29 August 1997, Reports of Judgments and Decisions 1997-V, p. 1547, § 33*

¹⁴ *Celik v. Turkey* (the text is only available in French)

¹⁵ *Papachelas v. Greece, 25 march 1999, Application no. 31423/96, Reports of Judgments and Decisions 1999-II, § 30*

¹⁶ *Yildiz Olmez v. Turkey*, (the text is only available in French)

28. Փաստորեն, ՄԻԵԴ-ը նախապատմություն է տալիս այն տարբերակին, երբ դիմողը կամ նրա ներկայացուցիչը ծանոթ են լինում դատական ակտին: Դա չի վերաբերում բուն եզրափակիչ մասին, այլ իր մեջ ներառում է նաև դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները: Այս դեպքում միայն կարող է պատշաճ կերպով ապահովվել անձի կողմից իր իրավունքները վերականգնելու ուղղությամբ կատարվող գործողությունների հիմնավորվածությունը և բողոքների արդյունավետությունը:

V. Ժամկետների հաշվարկման վերաբերյալ որոշ Եվրոպական երկրների օրենսդրական կարգավորումները.

29. Ի տարբերություն ՀՀ օրենսդրության, Եվրոպական երկրների օրենսդրության մեջ նախապատվությունը տրվում է բողոք ներկայացնողներին այն առումով, որ բողոք ներկայացնելու ժամկետները սկսում են հաշվարկվել վճիռները տրամադրելու օրվանից, այլ ոչ թե վճռի եզրափակիչ մասի հրապարակման պահից: Որպես օրինակ կարող ենք բերել Հունաստանի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որով բողոք բերողի կողմից ***վերաքննիչ բողոք*** բերելու համար սահմանված են հետևյալ ժամկետները. «երեսուն (30) օր վերջնական դատական ակտը տրամադրելուց հետո, եթե բողոք բերողին բնակվում է Հունաստանում: Եթե բողոքարկուն Հունաստանի սահմաններից դուրս է բնակվում կամ բնակության վայրն անհայտ է, ապա վերջնաժամկետը վաթսուն (60) օր է՝ վերջնական դատական ակտի տրամադրումից հետո: Եթե վերջնական դատական ակտը չի տրամադրվում բողոք բերողին, ապա վերաքննիչ բողոք բերելու ժամկետը հաշվարկվում է վճռի հրապարակման պահից երեք (3) տարի»: ***Վճռաբեկ բողոք*** ներկայացնելու համար սահմանված է հետևյալ կարգը. «երեսուն (30) օր վերջնական դատական ակտի տրամադրումից հետո, եթե բողոք բերողը բնակվում է Հունաստանում: Եթե բողոք բերողը Հունաստանի սահմաններից դուրս է բնակվում կամ բնակության վայրն անհայտ է, ապա վերջնաժամկետը ինսուն (90) օր է՝ վերջնական դատական ակտի տրամադրումից հետո: Եթե վերջնական դատական ակտը չի տրամադրվում բողոք բերողին, ապա վճռաբեկ բողոք բերելու ժամկետը վճռի հրապարակման պահից երեք (3) տարի է»¹⁷:

30. Իսպանիայի քաղաքացիական օրենսգրքում սահմանված է վերաքննիչ բողոք ներկայացնելու հետևյալ ժամկետները: Այսպես. «Վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետները պետք է սկսվեն հաշվարկվել վերաքննության

¹⁷ http://ec.europa.eu/civiljustice/time_limits/time_limits_gre_en.htm

ենթակա առարկայի վերաբերյալ որոշման ծանուցումը կամ անհրաժեշտության դեպքում նամակի պարզաբանումները կամ մերժման վերաբերյալ ծանուցումն ստանալու օրվան հաջորդող օրվանից¹⁸:

31. Իսկ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքով վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված են հետևյալ ժամկետները. «Վերաքննիչ բողոք ներկայացնելու վերջնաժամկետը սահմանվում է 1 (մեկ) ամիս. սա օրենքով սահմանված ժամկետ է և սկսվում է հաշվարկվել դատարանի ձևակերպված որոշման տրամադրման օրվանից, սակայն ոչ ուշ, քանի վճռի հրապարակման օրվանից հետո՝ հինգ (5) ամսից ուշ»¹⁹:
32. Սա նշանակում է, որ բողոքարկման ժամկետները սկսում են հոսել դատական ակտի ստացման պահից, և ոչ թե հրապարակման օրվանից: Սակայն, գրեթե բոլոր դեպքերում էլ սահմանվում են որոշակի ողջամիտ ժամկետներ, որոնց լրանալուց հետո բողոք ներկայացնելու դեպքում այն կհամարվի անընդունելի: Այդպիսի վերջնաժամկետ Հունաստանում սահմանված է վճռի հրապարակումից հետո 3 տարին, իսկ Գերմանիայում՝ 5 ամիսը: Այս ժամկետները վերաբերում են այն դեպքերին, երբ վճիռը թղթային տեսքով չի տրամադրվում կողմին, այլ միայն հրապարակվում է դատական նիստի ժամանակ:
33. Եվրոպական երկրներում ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական դատավարությունում նախընտրությունը տրվում է ժամկետների հաշվարկմանը՝ վճռի ստացման օրվանից: Այսպես, Նորվեգիայի քրեական դատավարության օրենսգրքով վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետ սահմանված է երկու շաբաթը, որը սկսում է հոսել վճռի տրամադրման պահից²⁰:
34. Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ. «*իրավասու անձիք կարող են առաջին ատյանի դատարանի վճիռի դեմ՝ վերաքննիչ բողոք ներկայացնել վճռի օրինակի տրամադրման օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում*»: Հաջորդ դրույթը սահմանում է. «*եթե վճիռը ուղարկվում է մեղադրյալին և նրա պաշտպանին տարբեր օրերի, ապա վերաքննիչ բողոքի ժամկետը պետք է հաշվարկվի վճռի ավելի ուշ ստացման*

¹⁸ Իսպայիանի քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 448:

¹⁹ Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 517:

²⁰ Նորվեգիայի Թագավորության քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 310:

օրվանից»²¹:

35. Սլովակիայի քրեական դատավարության օրենսգրքով նույնպես ժամկետի հաշվարկը սկսվում է վճռի օրինակը հանձնելու օրվանից: Մահմանվում է, որ վերաքննիչ բողոք կարելի է ներկայացնել վճռի օրինակը տրամադրելու օրվանից հետո՝ 8 (ութ) օրվա ընթացքում: Ինչպես Խորվաթիայի դեպքում, այնպես էլ այստեղ սահմանվում է, որ եթե վճիռն ուղարկվում է և մեղադրյալին, և իր ներկայացուցչին կամ պաշտպանին, ապա ժամկետը սկսվում է հաշվարկվել վճռի ստացման առավել ուշ օրվանից²²:
36. Այսպիսով, եվրոպական երկրների օրենսդրության մեջ հստակ կարգավորում կա, ըստ որի՝ պաշտպանվում են բողոք ներկայացնող անձանց շահերն այն տեսանկյունից, որպեսզի ապահովվի նաև անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքը, որպեսզի դիմումատուները կարողանան օրենքով առավելագույնս պաշտպանված լինեն: Սրա պատճառն այն է, որ դատարան դիմելու իրավունքից է կախված անձանց խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունը: Այդ իրավունքը պետք է լինի մատչելի և իրական՝ արդյունավետ բողոք ներկայացնելու համար ողջամիտ ժամկետի տրամադրման առումով: Նման կարգավորման ներմուծումը ՀՀ օրենսդրության մեջ զգալի առաջընթաց կապահովի դատարանի մատչելիության իրավունքի անխափան իրականացման տեսանկյունից:

Եզրակացություն

Այսպիսով, պետությունների վրա դրված է դատական ակտի հրապարակման հստակ պարտավորություն այնպիսի պայմաններում, որպեսզի անձը հնարավորություն ունենա ծանոթանալու դրա ամբողջական տեքստին հետևյալ միջոցներից որևէ մեկի գործադրմամբ. (1)կամ այդ փաստաթուղթը տրամադրելով դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակումից անմիջապես հետո, (2) կամ դրա բովանդակությունը տեղադրելով համապատասխան շտեմարաններում: Այսպիսի պայմաններում պետությունը կապահովի դատաքննության հրապարակայնության, արդար դատաքննության և իրավական որոշակիության սկզբունքների իրագործումը, ինչպես նաև անձանց հնարավորություն կընձեռի ապահովելու իրենց խախտված իրավունքների

²¹ Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 379:

²² Սլովակիայի քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 248:

վերականգնման ուղղությամբ վերադաս աստյաններին ողջամիտ ժամկետում հիմնավորված բողոք բերելու իրավունքի իրականացումը: Իսկ եթե հրապարակվում է միայն դատական ակտի եզրափակիչ մասը, իսկ բուն պատճառաբանություններն ու դատարանի եզրահանգումները, ինչպես նաև վերջինիս կողմից կիրառած օրենքի դրույթները անհայտ են մնում անձի համար, ապա այդ պարագայում ողջամիտ և մարդու իրավունքների գերակայության տեսանկյունից ավելի նախընտրելի կլինի ժամկետների հաշվարկը սկսել դատական ակտը անձին փաստացի հանձնելու օրվանից:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան